



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

ք. Երևան

«30» հունվարի 2017թ. № 56-Ա

«ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի
դեկտեմբերի 29-ի N 1313-Ն որոշման 14-րդ կետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

- 1) «Զբոսաշրջության զարգացման 2017 թվականի ծրագիրը»՝ համաձայն N 1 հավելվածի.
- 2) «Զբոսաշրջության զարգացման 2017 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը»՝ համաձայն N 2 հավելվածի:

ԶԱՐՄԻՆԵ ԶԵՅԹՈՒՆՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

2017 ԹՎԱԿԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

Ի. ՆԱԽԱԲԱՆ

1. Միավորված ազգերի կազմակերպության զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ-ի ԶՀԿ) տվյալներով՝

1) 2015 թվականին համաշխարհային զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 1 միլիարդ 184 միլիոն՝ 50 միլիոնով կամ 4.4 տոկոսով ավելի, քան 2014 թվականին,

2) 2016 թվականի հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածում համաշխարհային զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 956 միլիոն՝ 32 միլիոնով կամ 4.0 տոկոսով ավելի, քան 2015 թվականի նույն ժամանակահատվածում,

3) վերջին հինգ տարիներին համաշխարհային զբոսաշրջային այցելությունների միջին տարեկան աճը կազմել է շուրջ 4.5 տոկոս,

4) 2015 թվականին ներքին զբոսաշրջային այցելությունները համաշխարհային մակարդակով կազմել են շուրջ 5-6 միլիարդ:

2. Վիճակագրական տվյալներով՝

1) 2015 թվականին Հայաստան ներգնա զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 1 միլիոն 192 120՝ շուրջ 1.0 տոկոսով պակաս, քան 2014 թվականին,

2) վերջին հինգ տարիներին Հայաստան ներգնա զբոսաշրջային այցելությունների միջին տարեկան աճը կազմել է շուրջ 9.0 տոկոս,

3) 2015 թվականին ներքին զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 871888՝ 1.4 տոկոսով ավելի, քան 2014 թվականին,

4) 2016թ. հունվար-սեպտեմբերին ներգնա զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 969010, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշն աճել է 3.6%-ով,

5) 2016 թ. հունվար-սեպտեմբերին ներքին զբոսաշրջային այցելությունների թիվը կազմել է 867495, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշը աճել է 11.0%-ով:

II. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

3. Ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել՝

1) «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2016 թվականի հոկտեմբերի 21-ի ԱԺՈ-243-Ն որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը.

3) 2008 թվականի փետրվարի 13-ին Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն արժանացած Զբոսաշրջության զարգացման հայեցակարգը:

III. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

4. Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել՝

- 1) Հայաստան զբոսաշրջային այցելությունների ավելացմանը՝ մինչև 2020 թվականը հասցնելով տարեկան 2.5 մլն,
- 2) Հայաստանի կայուն և համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը,
- 3) ազգային եկամտի ավելացմանը,
- 4) բնակչության կենսամակարդակի բարձրացմանը,
- 5) պատմամշակութային ժառանգության պահպանությանը, զարգացմանը և պատշաճ ներկայացմանն ու խթանմանը,
- 6) Հայաստանի և հայ ժողովրդի համաշխարհային ճանաչելիության ու հարգանքի բարձրացմանը,
- 7) Հայաստան սփյուռք կապերի ու հայապահպանության ամրապնդմանն ու զարգացմանը,
- 8) Հայաստանի, որպես աշխարհում ամենագրավիչ զբոսաշրջային երկրներից մեկի, նկարագրի ձևավորմանը,
- 9) համամարդկային արժեքների պահպանությանը, զարգացմանը, խթանմանը, միջազգային համերաշխության և խաղաղության ամրապնդմանը և այդ գործընթացներում Հայաստանի դերի բարձրացմանը:

IV. ԾՐԱԳՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Ծրագրի նպատակի իրականացման համար ծրագրային միջոցառումներն ուղղված են հետևյալ խնդիրների լուծմանը՝

- 1) ամրապնդել և շարունակական բարձրացնել Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի մրցունակությունը,
- 2) ապահովել ամբողջական վիճակագրություն, որակյալ հետազոտություններ, ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ ի նպաստ պետական քաղաքականության արդյունավետ մշակմանն ու իրականացման,
- 3) դիվերսիֆիկացնել հայկական զբոսաշրջային արդյունքը, ձևավորել նոր, մրցունակ զբոսաշրջային արդյունքներ,
- 4) դիվերսիֆիկացնել Հայաստանի ու հայկական զբոսաշրջային արդյունքի շուկաները, որոշել գերակա նպատակային շուկաներն ու իրականացնել նպատակային մարքեթինգ և խթանում,
- 5) ապակենտրոնացնել զբոսաշրջությունը դեպի ՀՀ մարզեր, այդ թվում նաև գյուղական համայնքներ,

- 6) համաշխարհային շուկայում ամրապնդել, զարգացնել և խթանել Հայաստանի նկարագիրը՝ որպես կայուն, ապահով, ձեռնարկատիրության, ներդրումների և զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ երկիր,
- 7) բարելավել համաշխարհային շուկային Հայաստանի հասանելիությունը՝ տրանսպորտային հասանելիության և մուտքի-ելքի մատչելիության բարձրացման միջոցով,
- 8) բարելավել և զարգացնել ենթակառուցվածքները,
- 9) ամրապնդել և շարունակական բարձրացնել ծառայությունների որակը,
- 10) զարգացնել մարդկային ռեսուրսները,
- 11) ապահովել բարենպաստ գործարար, ներդրումային միջավայր,
- 12) բարելավել զբոսաշրջային կենտրոնների և զբոսաշրջային գրավչության օբյեկտների կառավարումը,
- 13) խթանել զբոսաշրջության ոլորտի նկատմամբ հանրային հետաքրքրությունը և շահագրգռվածությունը, շահագրգիռ կողմերի միջև ապահովել ընդհանուր տեսլականի ձևավորում ու արդյունավետ համագործակցություն,
- 14) աջակցել զբոսաշրջության բնագավառում գործող, մասնավոր հատվածը ներկայացնող կազմակերպությունների գործունեությանը,
- 15) ամրապնդել և շարունակական ակտիվացնել միջազգային համագործակցությունը,
- 16) ապահովել զբոսաշրջիկների իրավունքների լիարժեք իրականացումը:

V. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2017 թվականին ծրագրային միջոցառումներն ուղղված կլինեն

6. Ինստիտուցիոնալ բարեփոխումներին, մասնավորապես ծառայությունների որակի և մրցունակության ամրապնդմանն ու շարունակական բարձրացմանը, այդ թվում՝ որակավորման չափանիշների ներդրմանը, սպառողների իրավունքների ու ներքին շուկայի պաշտպանությանը, վիճակագրական-տեղեկատվական համակարգի կատարելագործմանը, գործարար-ներդրումային միջավայրի բարելավմանը, համաշխարհային շուկային Հայաստանի հասանելիության բարձրացմանը,

7. զբոսաշրջության ոլորտի շահագրգիռ կողմերի միջև համագործակցության ապահովմանը և համակարգմանը, այդ թվում առկա խնդիրների բացահայտմանը, առաջնահերթությունների գնահատմանը, զարգացման ծրագրերի և բյուջեի մշակմանը, շահագրգիռ կողմերի միջև համագործակցության և հետադարձ կապի ապահովմանը,

8. Ակտիվ և թիրախային մարքեթինգային և խթանման միջոցառումների իրականացմանը, այդ թվում թիրախային շուկաներից լրագրողների և զբոսաշրջության ոլորտի մասնագետների՝ Հայաստան ճանաչողական այցերի կազմակերպմանը, թիրախային շուկաներում շնորհանդեսների, մշակութային և այլ միջոցառումների կազմակերպմանը, թիրախավորված գովազդատեղեկատվական նյութերի մշակմանը և տարածմանը, էլեկտրոնային մարքեթինգի իրականացմանը, միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսին մասնակցության ապահովմանը, ճանաչողական և հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացնող հաղորդումների մշակմանը և հեռարձակմանը: Առավելագույն ջանքեր են գործադրվելու մարքեթինգային և խթանման միջոցառումներում Արցախը ներգրավելու ուղղությամբ,

9. Հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանը, այդ թվում նոր, մրցունակ զբոսաշրջային արդյունքների ձևավորմանը, զբոսաշրջության ապակենտրոնացմանը դեպի հանրապետության մարզեր, պատմամշակութային ժառանգության պահպանությանը, զարգացմանը և պատշաճ ներկայացմանն ու խթանմանը, զբոսաշրջության այլընտրանքային ձևերի զարգացմանը, ավանդական տոնակատարությունների կազմակերպմանը,

10. Մարդկային ռեսուրսների զարգացմանը, այդ թվում՝ Զբոսավարների միջազգային ուսումնական կենտրոնի գործունեությանն աջակցությանը, ոլորտը որակյալ և պահանջարկին համապատասխանող կադրերով ապահովմանը,

11. Միջազգային համագործակցության ամրապնդմանն ու զարգացմանը, այդ թվում՝ ՄԱԿ Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության, Սևծովյան Տնտեսական Համագործակցության, ԱՊՀ Զբոսաշրջության խորհրդի և այլ միջազգային կազմակերպությունների և գործընկերների հետ համագործակցության առավել ակտիվացմանը, երկկողմ համագործակցության ամրապնդմանը և առավել ակտիվացմանը, Հայաստանի միջազգային հեղինակության բարձրացմանը, համաշխարհային զբոսաշրջային արդյունաբերությանը Հայաստանի արդյունավետ ինտեգրմանը, Հայաստան սփյուռք կապերի ամրապնդմանը:

VI. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԾՐԱԳԻՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ

12. Ծրագրի իրականացումը նախատեսվում է ապահովել շահագրգիռ կողմերի՝ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և միջազգային կազմակերպությունների համագործակցությամբ:

VII. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

13. «Զբոսաշրջության զարգացման 2017 թվականի ծրագիրը» կիրականացվի Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի ֆինանսավորմամբ՝ 98 մլն դրամի չափով, և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին (մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի համաֆինանսավորմամբ):

A handwritten signature in black ink, consisting of several loops and a long horizontal stroke at the end.

Զբոսաշրջության պետական կոմիտեի
նախագահ

Ձ.Ձեյթունցյան

Հավելված N 2
 ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության
 Ջրոսաշրջության պետական կոմիտեի նախագահի
 2017 թվականի «հունվարի» « 30 »
 N 56-Ա հրամանի

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

ՋՐՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN	Միջոցառման անվանումը	Ակնկալվող արդյունքը	Վերստուգելի չափանիշը	Պատասխանատու կատարողները (համակատարողները)	Կատարման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4	5	6	7
1. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ						
1.1	Ջրոսաշրջության ոլորտը կարգավորող իրավական ակտերի կատարելագործում, մասնավորապես	Ջրոսաշրջության ոլորտի վարչական ներդրում, ռեգիստրի գրասաշրջային ռեսուրսների գրանցամատյանի ձևավորում Ջրոսավարների, գրասաշրջային օպերատորների	Համապատասխան իրավական ակտերի նախագծերի ներկայացում ՀՀ կառավարություն	Ջրոսաշրջության պետական կոմիտե ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի միջոցով	«Ջրոսաշրջության մասին» ՀՀ օրենքի և առնչվող այլ օրենքների նախագծերը	

<p>«Ջրոսաշրջության մասին» ՀՀ օրենքի և առնչվող օրենքների ու այլ իրավական ակտերի նախագծերի մշակում</p>	<p>գործակալների, հյուրանոցային ծառայությունների լիցենզավորման, զբոսաշրջային ավտոբուսների ու հանրային սննդի օբյեկտների կամավոր որակավորման միջոցով ծառայությունների որակավորման չափանիշների ներդրում,</p> <p>սպառողների իրավունքների ու ներքին շուկայի պաշտպանություն,</p> <p>Հայաստանի ու հայկական մշակութային ժառանգության վերաբերյալ տեղեկատվական անվտանգության ապահովմանն աջակցություն,</p> <p>ծառայությունների որակի ապահովում և համաշխարհային շուկայում Հայաստանի ու հայկական զբոսաշրջային արդյունքի</p>			<p>2017թ-ի փետրվարի երկրորդ տասնօրյակ,</p> <p>«Ջրոսաշրջության մասին» ՀՀ օրենքից բխող ՀՀ կառավարության նախագծերը</p> <p>օրենքն ուժի մեջ մտնելուն հաջորդող ամսվա 3-րդ տասնօրյակ</p>	
--	---	--	--	---	--

		<p>իմիջի ու մրցունակության շարունակական բարձրացում սահմանային անցման գործընթացների ոլորացում</p> <p>գործարար ներդրումային միջավայրի բարելավում</p>				
1.2.	<p>Զբոսաշրջության ոլորտի վիճակագրական, տեղեկատվական համակարգի կատարելագործում</p>	<p>Հայաստանի գույքագրված և դասակարգված զբոսաշրջային ռեսուրսներ</p>	<p>Այցելություններ ՀՀ մարզեր, համագործակցություն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ և հավաքագրված տվյալներ</p>	<p>Զբոսաշրջության պետական կոմիտե, ՀՀ մշակույթի, ՀՀ բնսպահ պանության, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություններ</p>	2017թ. ընթացքում	
1.2.1.	<p>«Զբոսաշրջության սատելիտային հաշիվ» համակարգի ներդրմանն ուղղված միջոցառումներ</p>	<p>«Զբոսաշրջության սատելիտային հաշիվ» համակարգի ներդրման նախադրյալների ստեղծում, այդ թվում՝ զբոսաշրջային այցելությունների վիճակագրական հետազոտության իրականացմանն ուղղված</p>	<p>Զբոսաշրջային այցելությունների վիճակագրական հետազոտության իրականացման գործընթացի մեկնարկ</p>	<p>Զբոսաշրջության պետական կոմիտե ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն,</p>	2017թ. ընթացքում	<p>օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>

		գործընթացի կազմակերպում և այդ ուղղությամբ բանակցությունների վարում՝ համագործակցելով շահագրգիռ պետական կառավարման մարմինների և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ		(համաձայնությամբ « Կենտրոնական բանկ (համաձայնությամբ)		
1.2.2.	Զբոսաշրջության վիճակագրության վարման մեթոդի կատարելագործում՝	Զբոսաշրջային այցելությունների քանակի, զբոսաշրջիկների սեռի, տարիքի, քաղաքացիության վերաբերյալ առավել ճշգրիտ վիճակագրության համակարգի ներդրման գործընթացի մեկնարկ՝ ՍԵԿՏ համակարգի կիրառմամբ և շահագրգիռ պետական կառավարման մարմինների ու դոնոր կազմակերպությունների հետ համագործակցությամբ	Համապատասխան հետազոտության իրականացման հաշվետվություն	Զբոսաշրջության պետական կոմիտե, « ԼՂ ազգային վիճակագրական ծառայություն (համաձայնությամբ « ԼՂ ազգային անվտանգության ծառայություն (համաձայնությամբ)	2017թ. ընթացքում	օրենքով չարգելված այլ աղբյուրներ
1.3.	Սահմանային անցման գործընթացի դյուրացում	Առանց արտոնագիր մուտք գործելու հնարավորության ունեցող քաղաքացիների երկրների և սահմանային անցման կետերում Հայաստանի Հանրապետության մուտքի	Նպատակային շուկա հանդիսացող երկրների (Ճապոնիայի, Կանադայի, Միացյալ Արաբական Էմիրությունների, Քաթարի և այլն) քաղաքացիների համար Հայաստան առանց	Զբոսաշրջության պետական կոմիտե « արտաքին գործերի	2017թ. ընթացքում	

	արտոնագիր հնարավորություն քաղաքացիների ցանկի ընդլայնում	ստանալու ունեցող երկրների շուկային հասանելիության բարձրացում	արտոնագրի մուտքի ոեժիմի սահմանմանն ուղղված առաջարկությունների ներկայացում	նախարարություն		
--	--	---	--	----------------	--	--

2. Զբոսաշրջության ոլորտի շահագրգիռ կողմերի միջև համագործակցության ապահովում և համակարգում

2.1	Զբոսաշրջության միջգերատեսչական խորհրդի ձևավորում	Զբոսաշրջությանն առնչվող այլ ոլորտների հետ համագործակցության ապահովում, զբոսաշրջության ոլորտի համակարգում և ոլորտի միասնական պետական քաղաքականության մշակման և իրականացման ապահովում, Ոլորտում առկա խնդիրների համատեղ քննարկումներ և խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների մշակում Զբոսաշրջության ոլորտի ուամակարգում և հետադարձ յապի ապահովում	ՀՀ շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների ներկայացուցիչներից կազմված խորհրդի ձևավորում,	Զբոսաշրջության պետական կոմիտե	2017թ. ընթացքում	
-----	--	--	---	----------------------------------	---------------------	--

2.2	<p>Պետություն-մասնավոր հատված ձևաչափով զբոսաշրջության խորհրդի ձևավորում</p>	<p>Ոլորտի նկատմամբ հանրային հետաքրքրության և շահագրգռվածության խթանում, պետության, մասնավոր հատվածի և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև ընդհանուր տեսլականի ձևավորում և ակտիվ ու արդյունավետ համագործակցության ապահովում</p> <p>Ոլորտում առկա խնդիրների համատեղ քննարկումներ և խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների մշակում</p> <p>Զբոսաշրջության ոլորտի համակարգում և հետադարձ կապի ապահովում</p>	<p>Ոլորտի մասնավոր հատվածի, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և այլ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների ներգրավմամբ Զբոսաշրջության խորհուրդի ձևավորում</p>	<p>Զբոսաշրջության պետական կոմիտե, շահագրգիռ այլ կազմակերպություններ</p>	2017թ. ընթացքում	
2.3	<p>Դոնոր կազմակերպությունների համակարգման և խորհրդի ձևավորում</p>	<p>Միջազգային և դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող կամ ֆինանսավորվող, զբոսաշրջությանն առնչվող կամ զբոսաշրջության բաղադրիչ պարունակող ծրագրերի համակարգում և արդյունավետության</p>	<p>Զբոսաշրջության ոլորտի միջազգային և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավմամբ համակարգման և խորհրդի ձևավորում</p> <p>Դոնոր</p>	<p>Զբոսաշրջության պետական կոմիտե</p>	2017թ. ընթացքում	

		բարձրացում Ոլորտում առկա խնդիրների համատեղ քննարկումներ և խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների մշակում	կազմակերպությունների և նրանց աջակցությամբ իրականացվող ծրագրերի մատրիցայի կազմում, և շահագրգիռ կողմերի համար հասանելիության ապահովում			
3. Մարքեթինգ և խթանում						
3.1.	Էլեկտրոնային մարքեթինգի ապահովում	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ներկայացում www.armenia.travel կայքում, ինչպես նաև Ֆեյսբուք (facebook) և սոցիալական այլ ցանցերում Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում և խթանում	Կայքի և սոցիալական ցանցերի էջերի վարում, տեխնիկական սպասարկում, բուլանդակության մշակում, թարգմանություն www.armenia.travel կայքի հասանելիություն առնվազն երկու լեզվով Գուգլ (Google) որոնողական համակարգում հանգուցային բառերի միջոցով առաջնակարգ դիրքավորում, ալվելի քան 70,000 այցելություն Ֆեյսբուք (facebook) և Ինստագրամ (Instagram) սոցիալական ցանցերում հայկական զբոսաշրջային	Զբոսաշրջության պետական կոմիտե	2017թ. ընթացքում	Պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

			արդյունքը ներկայացնող էջերի օգտատերերի թիվը մինչև տարեվերջ՝ 50000			
3.2	Գովազդատեղեկատվական նյութեր բոլոր նպատակային շուկաների համար	Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում և խթանում	<p>4-7 թույն տևողությամբ ֆիլմի պատրաստում և ներկայացում www.armenia.travel կայքում, սոցիալական ցանցերում, միջազգային միջոցառումներում և լրատվամիջոցներով</p> <p>Առնվազն 3 հատ շուրջ 45 վարկյան տևողությամբ տեսագրվագրի մշակում և ներկայացում www.armenia.travel կայքում, սոցիալական ցանցերում, միջազգային միջոցառումներում և լրատվամիջոցներով</p> <p>Գովազդային փաթեթների առնվազն երեք լեզվով մշակում</p>	Զբոսաշրջության պետական կոմիտե	2017թ. ընթացքում	Պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

			<p>և տպագրում այդ թվում առնվազն.</p> <ul style="list-style-type: none"> - 3000 բրոշյուր, - 1000 թղթապանակ - 10000 քարտեզ (բոլոր մարզերի վերաբերյալ), - 20000 տեղեկատվական թերթիկ 1 էջի վրա <p>Էլեկտրոնային բրոշյուրներ</p> <p>և տարածում տեղեկատվական կենտրոններում, միջազգային ցուցահանդեսներում, ՀՀ դեսպանատներում, www.armenia.travel կայքում և սոցիալական ցանցերով</p>			
3.3.	Նպատակային շուկաներում մարքեթինգային և խթանման միջոցառումների իրականացում	Հայաստանի. որպես կայուն, ապահով, ձեռնարկատիրության, ներդրումների և զբոսաշրջության համար բարենպաստ ու գրավիչ երկրի նկարագրի ամրապնդում, զարգացում և խթանում	Հայաստանը ներկայացնող գովազդային արշավի իրականացում նպատակային շուկաներում՝ ըստ հնարավորության Ռուսաստանում, Արաբական ծոցի երկրներում, Արևմտյան Եվրոպայում, Իրանում, Չինաստանում, Ճապոնիայում, Կանադայում համագործակցելով դեպի Հայաստան չվերթներ	Զբոսաշրջության պետական կոմիտե	2017թ. ընթացքում	Պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

			<p>իրականացնող ավիաընկերությունների հետ, այդ թվում՝</p> <ul style="list-style-type: none"> - Հայաստանի օրերի կազմակերպում համագործակցելով ՀՀ դեսպանատների հետ, - Նպատակային շուկաներից լրագրողների, զբոսաշրջության մասնագետների ճանաչողական այցերի կազմակերպում - Հայաստանի մասին առնվազն 5 հոդվածի տպագրում առաջատար մասնագիտացված պարբերականներում, սոցիալական ցանցերում 			
3.4	Ռուսաստանի Դաշնությունում մարքեթինգային և խթանման միջոցառումների իրականացում	Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի ճանաչելիության և գրավչության բարձրացում՝ համագործակցելով նաև Սոբեդա և այլ ավիաընկերության հետ				

3.4.1.	Ճանաչողական այցերի կազմակերպում	Ճանաչողական այցերի կազմակերպում լրագրողների և միջոցառումային (MICE) զբոսաշրջության մասնագետների համար	Հայաստանը և հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացնող առնվազն 10 հոգվածի տպագրում առաջատար մասնագիտացված պարբերականներում, սոցիալական ցանցերում մշակված և տարածված առնվազն 500 MICE կատալոգ մշակված և հրատարակված MICE ինտերնետային կայք՝ www.MICEinArmenia	Զբոսաշրջության պետական կոմիտե	2017թ. ընթացքում	Պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
3.4.2	«Հայաստանի տարին Ռուսաստանում» միջոցառման կազմակերպում	Պետական և մասնավոր հատվածների համագործակցությամբ Հայաստանի ճանաչելիության և գրավչության բարձրացում Ռուսաստանի տարբեր քաղաքներում (Մոսկվա, Սանկտ-Պետերբուրգ, Եկատերինբուրգ, Վորոնեժ, Նովոսիբիրսկ և այլ),	Առնվազն 5 շնորհանդեսի կազմակերպում Ռուսաստանի տարբեր մարզերում (ՌԴ-ում ՀՀ դեսպանության և Առևտրական ներկայացուցչի հետ համագործակցությամբ) «Ռուսական հետք» զբոսաշրջային արդյունքի ներկայացում Ռուսաստանյան հեղինակավոր առնվազն մեկ ամսագրում Հայաստանը և հայկական զբոսաշրջային արդյունքը			

			<p>ներկայացնող նյութի առկայություն (օրինակ՝ «Կոմերսանտ» պարբերականի ներդիր, այլ)</p> <p>Գովազդային փաթեթների տարածում (առնվազն 1000 օրինակ) տարբեր հարթակներում, շնորհանդեսների շրջանակներում Ռուսաստանյան առաջատար մասնագիտացված հեռուստաալիքներով Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի ներկայացման համար անհրաժեշտ բանակցությունների մեկնարկ (ճանապարհորդական, խոհարարական և այլ)</p> <p>Հանդիպում-քննարկումներ Մոսկվայում և Ռուսաստանի տարբեր մարզերում՝ իրավասու պետական մարմինների և մասնավոր հատվածի ներկայացուցիչների</p>			
--	--	--	---	--	--	--

			մասնակցությամբ			
3.5	<p>Սփյուռքում մարքեթինգային և խթանման միջոցառումների իրականացում</p>	<p>Սփյուռքի հայկական համայնքների հետ համագործակցության ակտիվացում՝ օգտագործելով ՀՀ արտաքին գործերի նախարարության և արտասահմանում հայկական ներկայացուցչական մարմինների ռեսուրսը</p> <p>Սփյուռքում հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում և գրավչության բարձրացում</p>	<p>Սփյուռքի առնվազն 3 համայնքներում կազմակերպված միջոցառումներ, շնորհանդեսներ՝ համագործակցելով եկեղեցու, ՀՀ դեսպանությունների, հայկական համայնքների և համայնքային կազմակերպությունների հետ</p> <p>Սփյուռքի պարբերականներում տպագրված գովազդային հոդվածներ</p> <p>Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի գրավչության վերաբերյալ տեղեկատվության տարածում Սփյուռքի հոգևոր, մշակութային, հայագիտական կենտրոնների և մասնագիտացված միությունների տեղեկատվական հարթակների</p>	<p>Զբոսաշրջության պետական կոմիտե,</p> <p>ՀՀ սփյուռքի նախարարություն</p> <p>ՀՀ արտաքին գործերի նախարարություն</p>	2017թ. ընթացքում	<p>Պետական բյուջե</p> <p>Օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>

			միջոցով Ազգային հեռուստատեսության հետ բանակցությունների մեկնարկ Հայաստանը և հայկական զբոսաշրջային արդյունքը ներկայացնող հաղորդումների հեռարձակման նպատակով			
3.6	Մասնակցություն միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսների	Հայկական և օտարերկրյա զբոսաշրջային օպերատորների միջև գործարար կապերի հաստատում, ցուցահանդեսներին պատշաճ մասնակցություն, Հայաստանի և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում ու խթանում արտասահմանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ Կապահովվի մասնակցությունը Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում «ITB'2017» և 2 այլ միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներին	Մասնակցություն և հայկական զբոսաշրջային արդյունքի պատշաճ ներկայացում առնվազն 3 միջազգային հեղինակավոր զբոսաշրջային ցուցահանդեսների՝ յուրաքանչյուր ցուցահանդեսին ապահովելով առնվազն 5 զբոսաշրջային օպերատորի մասնակցություն	Զբոսաշրջության պետական կոմիտե	2017թ. ընթացքում	Պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		Հայաստանի զարգացման հիմնադրամի միջոցով՝ կնքելով համապատասխան պայմանագիր				
3.7.	Պետական աջակցություն զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեության ապահովմանը	<p>Երևանում և ՀՀ մարզերում զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների միասնական համակարգի ձևավորում</p> <p>Գառնիի, Գորիսի, Դիլիջանի, Գյումրիի, Սևանի զբոսաշրջային տեղեկատվական կենտրոններին ֆինանսական, տեղեկատվական և մեթոդական, Երևանի «Հայաստանի բնության պետական թանգարան» ՊՈԱԿ-ի տարածքում գործող տեղեկատվական կենտրոնին տեղեկատվական և մեթոդական աջակցության տրամադրում</p> <p>Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աջակցություն (առնվազն</p>	<p>Տեղեկատվական կենտրոնների գործունեության կառավարման մոդելի ներկայացում</p> <p>ՀՀ մարզերում առնվազն 5 զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը պետական աջակցություն</p>	Զբոսաշրջության պետական կոմիտե	2017թ. ընթացքում	Պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

		տրամադրելով անվճար տարածք)				
4. Հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում, փաթեթավորում և խթանում						
4.1.	Առնվազն 20 զբոսաշրջային վայր չհանդիսացող պատմամշակութային հուշարձաններն ու բնության հատուկ պահպանվող տարածքները զբոսաշրջավայր դարձնելու ծրագրի մշակում	<p>Զբոսաշրջության ապակենտրոնացում դեպի ՀՀ մարզեր և Արցախ</p> <p>Հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում, նոր մրցունակ զբոսաշրջային արդյունքների ձևավորում</p> <p>Պատմամշակութային ժառանգության պահպանություն, զարգացում և պատշաճ ներկայացում ու խթանում</p>	Առնվազն 20 զբոսաշրջային վայր չհանդիսացող պատմամշակութային հուշարձաններն ու բնության հատուկ պահպանվող տարածքները զբոսաշրջավայր դարձնելու ծրագրի ներկայացում	Զբոսաշրջության պետական կոմիտե	2017թ. ընթացքում	
4.2	«Ուխտագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր» զբոսաշրջային ռազմավարության	Կրոնական և ուխտագնացության զբոսաշրջության զարգացմանը նպաստում	«Ուխտագնացություն դեպի առաջին քրիստոնյա երկիր» զբոսաշրջային ռազմավարության ներկայացում	Զբոսաշրջության պետական կոմիտե	2017թ. ապրիլ	
		Բացառիկ զբոսաշրջային արդյունքով համաշխարհային				

	մշակում	շուկայում ներկայացման խթանում Հայաստանի				
4.3	Զբոսաշրջության մեծ պոտենցիալ ունեցող նոր ուղղությունների զարգացման ծրագրի մշակում	Լեռնագնացության, քայլարշավային, հեծանվային, էքստրեմալ, միջոցառումային (MICE), գինու, «Ռուսական հետք», առողջապահական, առողջարանային և զբոսաշրջության այլ ձևերի զարգացմանը նպաստում	Զբոսաշրջության մեծ պոտենցիալ ունեցող նոր ուղղությունների զարգացման ծրագրի ներկայացում	Զբոսաշրջության պետական կոմիտե	2017թ. ընթացքում	
4.4	Մարքեթինգային միջոցառումներում զբոսաշրջության մեծ պոտենցիալ ունեցող նոր ուղղությունների ընդգրկում	Միջազգային և ներքին շուկաներում զբոսաշրջության մեծ պոտենցիալ ունեցող նոր արդյունքների պատշաճ փաթեթավորում և ներկայացում	Գովազդատեղեկատվական նյութերում, ճանաչողական այցերի ծրագրերում, շնորհանդեսներում զբոսաշրջության մեծ պոտենցիալ ունեցող նոր արդյունքների ներառում,	Զբոսաշրջության պետական կոմիտե	2017թ. ընթացքում	
4.5	ՀՀ մարզերում ավանդական փառատոների կազմակերպում	Համայնքներում զբոսաշրջության զարգացմանը, համաչափ տարածքային տնտեսական զարգացմանը նպաստում, հայկական զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացմանն	Պետական աջակցությամբ առնվազն 8 ավանդական փառատոների պատշաճ կազմակերպում ՀՀ մարզերում Յուրաքանչյուր փառատոնին	Զբոսաշրջության պետական կոմիտե ՀՀ տարածքային կառավարման	2017թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե օրենքով չարգելված

		<p>ու մրցունակության բարձրացմանը, տեղական ավանդույթների ու մշակույթի վերականգնմանն ու զարգացմանը, հյուրընկալող և շրջական համայնքներում տնտեսական ներուժի բացահայտմանն ու զարգացմանը նպաստում</p>
<p>4.5.1.</p>	<p>Պետական աջակցություն «Արենի» փառատոն» հիմնադրամին՝ ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքում «Թուֆ» խորագրով «Սյունյաց ավանդույթներ» փառատոնի կազմակերպման համար</p>	<p>«Սյունյաց ավանդույթներ» փառատոնի պատշաճ կազմակերպում՝ կնքելով համապատասխան պայմանագիր «Արենի» փառատոն» հիմնադրամի հետ</p> <p>Նախադրյալներ կատեղծվեն հյուրընկալող և շրջակա համայնքները «Մեծ մետաքսի ճանապարհ» զբոսաշրջային երթուղում ներգրավելու համար</p> <p>Առավելագույն ջանքերն կգործադրվեն փառատոնը նաև Արցախում կազմակերպելու համար</p> <p>Փառատոնին ներկա կգտնվի ավելի քան 3000 մարդ, որից</p>

<p>առնվազն 10 տաղավարով տեղական ավանդույթների, տնտեսական, այդ թվում գրոսաշրջային ներուժի ներկայացում</p>	<p>Նախարարություն</p> <p>«Վճակույթի նախարարություն</p>		<p>այլ աղբյուրներ</p>
<p>Փառատոնի վերաբերյալ դրական արձագանքներ, մամուլի հրապարակումներ</p>	<p>«Գյուղատնտեսության նախարարություն</p>		
<p>Փառատոնը հյուրընկալող և շրջակա համայնքներից դրական արձագանքներ, առաջարկություններ, ինչպես նաև նորամուծություններ, նոր գաղափարների, ապրանքների և ծառայությունների առաջարկ</p>	<p>Համապատասխան տեղական ինքնակառավարման մարմիններ</p>	<p>2017 թ. հուլիս</p>	<p>«Ալեքսական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>

		500 օտարերկրյա զբոսաշրջիկ				
4.5.2.	Պետական աջակցություն «Մեդիա Օնիքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում պատմամշակութային նվերաձևնդին նպաստող փառատոնի կազմակերպման համար	<p>Փառատոնի պատշաճ կազմակերպում՝ կնքելով համապատասխան պայմանագիր «Մեդիա Օնիքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ</p> <p>Փառատոնի ընթացքում կներկայացվի ՀՀ մարզերի և ԼՂՀ-ի գորգագործությունը, դեկորատիվ և կիրառական արվեստները, հուշանվերները</p> <p>Փառատոնին ներկա կգտնվի ավելի քան 3000 մարդ, որից 500 օտարերկրյա զբոսաշրջիկ</p>			2017թ. օգոստոս	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
4.5.3	Պետական աջակցություն «Արենի» փառատոն» հիմնադրամին՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Խաչիկի համայնքում «Գյուղական ավանդույթներ» փառատոնի կազմակերպման	<p>«Գյուղական ավանդույթներ» փառատոնի պատշաճ կազմակերպում՝ կնքելով համապատասխան պայմանագիր «Արենի» փառատոն» հիմնադրամի հետ</p> <p>Փառատոնի ընթացքում կներկայացվի գյուղի ավանդույթը, տեղական մշակույթը</p> <p>Փառատոնին ներկա կգտնվի</p>			2017 թ. սեպտեմբեր	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ

	համար	ավելի քան 3000 մարդ, որից 500 օտարերկրյա զբոսաշրջիկ				
4.5.4	Պետական աջակցություն «Արենի» փառատոն» հիմնադրամին՝ Գինու փառատոնի կազմակերպման համար	<p>«Գինու» փառատոնի պատշաճ կազմակերպում՝ կնքելով համապատասխան պայմանագիր «Արենի» փառատոն» հիմնադրամի հետ</p> <p>Փառատոնին կներկայացվի հայկական գինեգործության ավանդույթը, գինու զբոսաշրջության ներուժը</p> <p>Փառատոնին ներկա կգտնվի ավելի քան 10000 մարդ, որից 2000 օտարերկրյա զբոսաշրջիկ</p>			2017թ. հոկտեմբեր	« պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
4.5.5	Պետական աջակցություն Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման հասարակական կազմակերպության ը՝ «Լոռու մարզի Ախթալա համայնքում Ավանդական ուտեստների	<p>Ավանդական ուտեստների մրցույթ- փառատոնի պատշաճ կազմակերպում՝ կնքելով համապատասխան պայմանագիր Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման հասարակական կազմակերպության հետ</p> <p>Փառատոնը կնպաստի Հայաստան-Վրաստան տարածաշրջանային միասնական զբոսաշրջային արդյունքի</p>			2017թ. սեպտեմբեր	« պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ

	<p>մրցույթ-փառատոնի կազմակերպման համար</p>	<p>ձևավորմանն ու համաշխարհային շուկայում ներկայացմանն ու խթանմանը</p> <p>Փառատոնին ներկա կգտնվի ավելի քան 5000 մարդ, որից 1000 օտարերկրյա զբոսաշրջիկ</p>				
<p>4.5.6</p>	<p>Պետական աջակցություն «Բեռլին հյուրերի տուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը</p> <p>ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում «Ճանաչիր Գյումրին» (Feel Gyumri) փառատոնի կազմակերպման համար</p>	<p>«Ճանաչիր Գյումրին» փառատոնի պատշաճ կազմակերպում կնքելով համապատասխան պայմանագիր «Բեռլին հյուրերի տուն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ</p> <p>Փառատոնի կազմակերպումը կնպաստի Գյումրի քաղաքը զբոսաշրջային երթուղիներում առավել ակտիվորեն ներգրավելու, ինչպես նաև Պորեդա ավիաընկերության ավիաչվերթների ռեսուրսի օգտագործմամբ ուսական շուկայի համար տարածաշրջանային կենտրոնական զբոսաշրջավայր դարձնելու գործընթացին</p> <p>Փառատոնին ներկա կգտնվի</p>			<p>2017թ. հուլիս</p>	<p>ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ</p>

		ավելի քան 3000 մարդ, որից 500 օտարերկրյա զբոսաշրջիկ				
4.5.7	Պետական աջակցություն Ջորական (Չադախլու) համայնքի երիտասարդական խորհրդին՝ ՀՀ Տավուշի մարզի Ջորական (Չադախլու) համայնքում «1000 տարվա գյուղամեջ» փառատոնի կազմակերպման համար	«1000 տարվա գյուղամեջ» փառատոնի պատշաճ կազմակերպում կնքելով համապատասխան պայմանագիր համայնքի երիտասարդական խորհրդի հետ Փառատոնի կազմակերպումը կնպաստի ՀՀ սահմանամերձ համայնքներում զբոսաշրջության զարգացմանը, տնտեսական ակտիվացման ու հզորացմանը Փառատոնին ներկա կգտնվի ավելի քան 2000 մարդ, որից 200 օտարերկրյա զբոսաշրջիկ			2017թ. սեպտեմբեր	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
4.5.8	Պետական աջակցություն այլ փառատոնի կազմակերպմանը	Փառատոնը կկազմակերպվի ՀՀ որևէ մարզում՝ հյուրընկալող և շրջակա համայնքների մասնակցությամբ ու համագործակցությամբ			2017թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
4.6	Զբոսաշրջության միջազգային օրվան նվիրված	Զբոսաշրջության միջազգային օրվան նվիրված տոնակատարության պատշաճ	Զբոսաշրջության արդյունաբերության	Զբոսաշրջության պետական կոմիտե	2017թ. Սեպտեմբեր-	ՀՀ պետական

	տոնակատարության կազմակերպում	կազմակերպում Հայաստանի զբոսաշրջության արդյունաբերության ծեռքերումների ներկայացում. տարբեր բնագավառների ներկայացուցիչների խրախուսում	ներկայացուցիչների մասնակցություն, մամուլի հրապարակումներ, արձագանքներ	Շահագրգիռ կազմակերպություն	հոկտեմբեր	բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ
4.7.	Քայլարշավային երթուղիների մշակում	Առնվազն 20 քայլարշավային երթուղիների մշակում՝ կնքելով համապատասխան պայմանագիր «Նատուրա տուր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ	Երթուղիների տեղադրում մասնագիտացված ինտերնետային կայքում (www.wiciloc.com)՝ հայերենով և անգլերենով	Զբոսաշրջության պետական կոմիտե Շահագրգիռ կազմակերպություն	2017թ. ընթացքում.	ՀՀ պետական բյուջե Օրենքով չարգելված այլ աղբյուրներ

5. Մարդկային ռեսուրսների զարգացում

5.1.	Պետական աջակցություն «Հայ զբոսավարների գիղիա» հասարակական կազմակերպությանը զբոսավարների միջազգային ուսումնական կենտրոնի գործունեությունն	Զբոսավարների ուսուցման և վերապատրաստման ապահովում՝ կնքելով համապատասխան պայմանագիր «Հայ զբոսավարների գիղիա» ՀԿ-ի հետ	Զբոսավարների միջազգային ուսումնական կենտրոնի բնականոն գործունեության ապահովում, առնվազն 10 միջազգային զբոսավարների վերապատրաստում	Զբոսաշրջության պետական կոմիտե	2017 թ. ընթացքում	ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված այլ աղբյուրներ
------	--	--	---	-------------------------------	----------------------	---

	ապահովելու նպատակով					
6. Միջազգային համագործակցություն						
6.1.	Միջազգային համագործակցություն	<p>ՄԱԿ Զբոսաշրջության Համաշխարհային Կազմակերպության, Սևծովյան Տնտեսական Համագործակցության, ԱՊՀ Զբոսաշրջության խորհրդի և այլ միջազգային կազմակերպությունների և գործընկերների հետ համագործակցության առավել ակտիվացում</p>	<p>Հայաստանի միջազգային հեղինակության ամրապնդում և շարունակական բարձրացում</p> <p>Համաշխարհային զբոսաշրջային արդյունաբերությանը Հայաստանի արդյունավետ ինտեգրում</p> <p>Համամարդկային արժեքների պահպանությանը, զարգացմանը, խթանմանը, միջազգային համերաշխության և խաղաղության ամրապնդման Հայաստանի դերի բարձրացում</p> <p>Միջազգային երկկողմ կապերի ամրապնդում և զարգացում</p> <p>Հայաստան սփյուռք կապերի ու հայապահպանության</p>	<p>Զբոսաշրջության պետական կոմիտե</p> <p>«Արտաքին գործերի նախարարություն</p>	2017թ. ընթացքում	«Ա պետական բյուջե

--	--	--

Զբոսաշրջության պետական կոմիտեի
նախագահ

ամրապնդում ու զարգացում			
-------------------------	--	--	--



Ջ.Ջեյթունցյան